ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2026թ. թիվ 390-Ա

Հ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 4)-րդ կետի, 124-րդ հոդվածի 2-րդ և 2.1-րդ կետերի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 60-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Լոռու մարզային տարածքային ստորաբաժանման կողմից տրված ծանուցագիրը և հաշվի առնելով Հ.Կիրակոսյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայկ Զավենի Կիրակոսյանին ազատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումից ս/թ հունիսի 9-ից մինչև հուլիսի 3-ը ներառյալ՝ պահպանելով աշխատատեղը:

2. Հ.Կիրակոսյանի բացակայության ժամանակ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Տաթևիկ Ներսեսյանին:

3. Հ.Կիրակոսյանի վարձատրությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. հունիսի 5
ք.Վանաձոր